ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«30» 04 2025 թ. N 115-Ն

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում քրեական վարույթների ցուցակագրման, հանձնում-ընդունում կատարելու ընթացակարգը կանոնակարգելու, քրեական վարույթի նյութերի ամբողջականությունը պահպանելու, իրեղեն ապացույցների, ինչպես նաև նախաքննության ընթացքում առգրավված կամ վերցված փաստաթղթերի և այլ առարկաների կորուստը բացառելու նպատակով և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների (այսուհետ՝ ստորաբաժանում) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչ)՝

1) վարույթն իրականացնող քննիչի արձակուրդ կամ գործուղման մեկնելու, ծառայությունից ազատվելու, կադրերի ռեզերվում գրանցվելու կամ Կոմիտեի այլ ստորաբաժանումում պաշտոնի նշանակվելու կամ քրեադատավարական ընթացակարգերով քրեական վարույթի նախաքննության կատարումը մեկ այլ քննիչի հանձնարարելու դեպքում՝ քրեական վարույթի նյութերն անմիջական ղեկավարին ներկայացնել կարված, համարակալված, ցուցակագրված՝ անմիջական ղեկավարին ուղղված զեկուցագրով.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված զեկուցագրում նշել (առկայության դեպքում) իրեղեն ապացույցների, ինչպես նաև քրեական վարույթներով առգրավված, վերցված փաստաթղթերի կամ այլ առարկաների և դրանց պահպանման կամ գտնվելու վայրի մասին.

3) քննիչի վարույթում գտնվող՝ անհրաժեշտ ապացուցողական և վարութային գործողությունները կատարված և հանրային քրեական հետապնդման ենթակա անձը չհայտնաբերված (Կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 25-ի թիվ 135-Լ հանձնարարականի հիման վրա հաշվառված), ինչպես նաև հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցված քրեական վարույթներն այլ քննիչի հանձնելիս կազմել հանձնման-ընդունման ակտ՝ ստուգելով և նշելով քրեական վարույթներով առգրավված, իրեղեն ապացույց ճանաչված իրերի, առարկաների առկայությունը.

4) սույն հանձնարարականի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված քրեական վարույթների հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը տասնօրյա ժամկետում ուղարկել համապատասխանաբար Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալին, տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության, հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության, զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության և տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետերին:

2. Ստորաբաժանումների պետերին՝

1) ապահովել սույն հանձնարարականով նախատեսված զեկուցագրի, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտի հաշվառումը ստորաբաժանման աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կողմից, մասնավորապես, զեկուցագրի հաշվառման իրականացումը հանձնարարելով ստորաբաժանման աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման պետին.

2) յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորաբաժանումում իրականացնել քննիչների կողմից անհրաժեշտ ապացուցողական և վարութային գործողությունները կատարված և հանրային քրեական հետապնդման ենթակա անձը չհայտնաբերված (Կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 25-ի թիվ 135-Լ հանձնարարականի հիման վրա հաշվառված) քրեական վարույթների ցուցակագրում՝ ըստ տարեթվերի, վարույթների համարների (աճողական կարգով), արարքի որակման, վարույթի էջերի քանակի՝ նշելով առգրավված կամ իրեղեն ապացույց հանդիսացող իրերը կամ առարկաները.

3) քրեական վարույթների ցուցակները, քննիչների կողմից ստորագրված վիճակում, մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ն ուղարկել համապատասխանաբար Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալին,

տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության, զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության, տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետերին:

3. Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալին, տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության, հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության, զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության, տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետերին՝

սույն հանձնարարականի 1-ին կետով, 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված կարգով ստացված փաստաթղթերով իրականացնել հաշվառում և արդյունքներն ամփոփող զեկուցագիրն յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 5-ը ներկայացնել Կոմիտեի նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալին, իսկ Կոմիտեի նախագահի ոլորտում գտնվող ստորաբաժանումների մասով՝ Կոմիտեի նախագահին:

4. Սույն հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն են իրականացնում տվյալ ստորաբաժանումների պետերը:

5. Սույն հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն են իրականացնում Կոմիտեի նախագահի տեղակալներն՝ ըստ համակարգման ոլորտների:

6. Սույն հանձնարարականն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, Կոմիտեի գլխավոր քարտուղարին, Կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ